ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N -714 Ա

<<28>> նոյեմբերի 2022 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԱՐԲՋԱՆՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՑՈՂԻԿ ՊԱՐՈՒՅՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕԳՆԱԿԱՆ (ՊԱՏՐՈՆ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված I-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման կանոնադրության 9 –րդ կետի, 14-րդ ենթակետի դրույթներով և հաշվի առնելով Ախուրյան համայնքին կից խնամակալության և հոգաբարձության մշտական գործող հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 28-ին կայացած հերթական նիստի դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս բնակավայրի բնակչուհի Լիանա Հրաչիկի Հակոբյանի 2022 թվականի նոյեմբերի 21-ի դիմումը, ամուսնու բարեկամուհու՝ Ցողիկ Պարույրի Ավետիսյանի նկատմամբ օգնական նշանակելու մասին

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս բնակավայրի բնակչուհի Ցողիկ Պարույրի Ավետիսյանի /ծնված 29.08.1957թ./ նկատմամբ նշանակել օգնական (պատրոն) Լիանա Հրաչիկի Հակոբյանին/բնակվող Ախուրյան համայնք Երազգավորս բնակավայրի 5 փ.17 տուն /
2. Սույն որոշման մի օրինակը հատկացնել Լիանա Հրաչիկի Հակոբյանին:
3. Որոշման հսկողությունը դնել Երազգավորս բնակավայրի վարչական ղեկավար՝ Ալիկ Սիմոնյանի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԻԳԻԹՅԱՆ

28 նոյեմբերի 2022 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբերի 2022 թվականի 715-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐՄԵՆ ԳԱԳԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և 2-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի թիվ 15-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները,Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 149-Ն որոշումը և հիմք ընդունելով Արմեն Գագիկի Վարդանյանի դիմումը որոշում եմ՝

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր «Արմեն Գագիկի Վարդանյան»ին (պետական ռեգիստրի գրանցման համար՝ 55.1277034 տրված՝ 2022-11-17 ՀՎՀՀ՝ 57448305) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան Գյումրու խճուղի 19 շենք 29.19 քմ հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:
2. Անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«28» նոյեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ N 716-Ա
28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԽԱՆՈՒՄ ԳԱՄԱԼԻ ՅՈՒՍՈՒԲՅԱՆԻՆ ԹՈՌԱՆ՝ ԱԲՐԱՀԱՄ ՉԱՐՔԻԱԶԻ ՅՈՒՍՈՒԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 9-րդ կետի 1-ին «գ» ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի բնակիչ Խանում Գամալի Յուսուբյանի դիմումը՝ Աբրահամ Չարքիազի Յուսուբյանին , ծնված 17.10.2007թ. նկատմամբ հոգաբարձու նշանակելու մասին և հիմք ընդունելով Ախուրյանի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 2-ին կայացած թիվ 6 նիստի դրական եզրակացությունը՝ որի համար հիմք է հանդիսացել միասնական սոցիալական ծառայության Ախուրյանի տարածքային կենտրոնի նախնական եզրակացությունը:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի բնակիչ Խանում Գամալի Յուսուբյանի 2007 թվականի հոկտեմբերի 17-ին ծնված թոռան՝ Աբրահամ Չարքիազի Յուսուբյանի նկատմամբ նշանակել հոգաբարձու:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**

28 նոյեմբերի 2022 թ.
գ.Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

« 28 » նոյեմբերի 2022 թվականի թիվ --717-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 599-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով.

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքում բնակարանային հարցերի մշտական հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 599-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

որոշման «6»-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ կետով.

, «7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի խորհրդական՝ Ռուբեն Հարությունյան:»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԻԳԻԹՅԱՆ

« 28 » նոյեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 718-Ա

<<29>> նոյեմբերի 2022 թվական գյուղ Ախուրյան

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 38-ՐԴ ՓՈՂՈՑ, 5/7 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0,019627 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՍՄԻԿ ՀԵՆՐԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԵՐԵՔ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահապանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածների դրույթներով և հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցված է եղել մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, այն կառուցված չէ կամ չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և չի հակասում քաղաքաշինական նորմերին ու չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով բնակելի տանը փաստացի բնակվող ընտանիքի անդամների համատեղ դիմումը որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն բնակավայրի, փողոց 38, տուն 5/7 հասցեում գտնվող բնակելի տունը 2000 թվականից փաստացի բնակեցված է Հասմիկ Հենրիկի Մկրտչյանի 3 անձից բաղկացած ընտանիքի կողմից և վերջիններս շուրջ 22 տարի անընդմեջ և բացահայտ տիրապետում են այդ բնակելի տունը՝ որպես սեփական գույք: Սակայն չեն պահպանվել բնակելի տան կառուցման համար սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերն ու բնակելի տան նկատմամբ ընտանիքի իրավունքները հաստատող փաստաթղթերը:

2.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի ուժով,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն բնակավայրի, փողոց 38, տուն 5/7 հասցեում գտնվող 08-078-0024-0005 կադաստրային ծածկագրից հողամասում ինքնակամ կառուցված 79.83 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը (բնակելի մակերես՝ 66.85 քառակուսի մետր, աստիճանահարթակ՝ 4.47 քառակուսի մետր, օժանդակ շինություն՝ 8.51 քառակուսի մետր) և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,019627 հեկտար հողամասը համարել քաղաքացի Հասմիկ Հենրիկի Մկրտչյանի 3 անձից բաղկացած ընտանիքի սեփականությունը:

3.Անշարժ գույքի նկատմամբ համասեփականատերեր ճանաչել՝

Հասմիկ Հենրիկի Մկրտչյանին, ծնված՝ 15.05.1975թ., աղջկան՝ Սուսաննա Հովհաննեսի Մկրտչյանին, ծնված՝ 22.02.1996թ., որդուն՝ Արտուշ Հովհաննեսի Մկրտչյանին, ծնված՝ 29.05.2002թ.:

4.Սույն որոշման 2-րդ կետում նշված բնակելի տան և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի և շինությունների բնութագրերը սահմանված կարգով կազմված հատակագծերը կցվում են որոշմանը:

5.Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթարկել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

29 նոյեմբերի 2022 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 719-Ա

<<29>> նոյեմբերի 2022 թվական գյուղ Ախուրյան

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 38-ՐԴ ՓՈՂՈՑ, 5/12 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0,02141 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԲՈՐԻՍԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՉՈՐՍ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահապանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածների դրույթներով և հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցված է եղել մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, այն կառուցված չէ կամ չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և չի հակասում քաղաքաշինական նորմերին ու չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով բնակելի տանը փաստացի բնակվող ընտանիքի անդամների համատեղ դիմումը որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն բնակավայրի, փողոց 38, տուն 5/12 հասցեում գտնվող բնակելի տունը 2011 թվականից փաստացի բնակեցված է Արմենուհի Բորիսի Հակոբյանի 4 անձից բաղկացած ընտանիքի կողմից և վերջիններս շուրջ 11 տարի անընդմեջ և բացահայտ տիրապետում են այդ բնակելի տունը՝ որպես սեփական գույք: Սակայն չեն պահպանվել բնակելի տան կառուցման համար սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերն ու բնակելի տան նկատմամբ ընտանիքի իրավունքները հաստատող փաստաթղթերը:

2.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակ մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի ուժով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն բնակավայրի, փողոց 38,

տուն 5/12 հասցեում գտնվող 08-078-0024-0005 կադաստրային ծածկագրից հողամասում ինքնակամ կառուցված 38,22 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,02141 հեկտար հողամասը համարել քաղաքացի Արմենուհի Բորիսի Հակոբյանի 4 անձից բաղկացած ընտանիքի սեփականությունը:

3.Անշարժ գույքի նկատմամբ համասեփականատերեր ճանաչել՝

Արմենուհի Բորիսի Հակոբյանին, ծնված՝ 08.08.1976թ., ամոսնուն՝ Արմեն Լյուդվիկի Հակոբյանին, ծնված՝ 20.11.1971թ., աղջկան՝ Հայկուշիկ Արմենի Հակոբյանին, ծնված՝ 24.11.2001թ., որդուն՝ Հակոբ Արմենի Հակոբյանին, ծնված՝ 05.07.2004թ.:

4.Սույն որոշման 2-րդ կետում նշված բնակելի տան և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի և շինությունների բնութագրերը սահմանված կարգով կազմված հատակագծերը կցվում են որոշմանը:

5.Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթարկել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

29 նոյեմբերի 2022 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 720-Ա

<<29>> նոյեմբերի 2022 թվական գյուղ Ախուրյան

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ 38-ՐԴ ՓՈՂՈՑԻ 5 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0,06837 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՆԻՉԿԱ ԳԱՐԵԳԻՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահապանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածների դրույթներով և հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցված է եղել մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, այն կառուցված չէ կամ չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և չի հակասում քաղաքաշինական նորմերին ու չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով քաղաքացի՝ Անիչկա Գարեգինի Գևորգյանի դիմումը որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի գյուղ Մարմաշեն, 38-րդ փողոց, 5 տան հասցեում գտնվող բնակելի տունը 1991 թվականից փաստացի բնակվել և օգտագործվել է Անիչկա Գարեգինի Գևորգյանի կողմից և վերջինս շուրջ 31 տարի անընդմեջ և բացահայտ տիրապետել է այդ բնակելի տունը, որպես սեփական գույք: Սակայն չեն պահպանվել բնակելի տան կառուցման համար սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հող հատկացման հիմքերն ու բնակելի տան նկատմամբ քաղաքացու իրավունքներն հաստատող փաստաթղթերը:

2.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի ուժով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի գյուղ Մարմաշեն, 38-րդ փողոց, 5 տան հասցեում գտնվող 08-078-0024-0005 կադաստրային ծածկագրից

հողամասում ինքնակամ կառուցված 61.31 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը և նրա պահպանման ու սպասարկման համար մախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,06837 հեկտար հողամասը համարել քաղաքացի՝ Անիչկա Գարեգինի Գևորգյանի /ծնված՝ 03.06.1949թ./ սեփականությունը:

3.Որոշման 2-րդ կետում նշված բնակելի տան և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի և շինությունների բնութագրերը սահմանված կարգով կազմված հատակագծերը կցվում են որոշմանը:

4. Շինությունների բնութագրում նշված օժանդակ շինությունները թողնել ինքնակամ:

5.Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթարկել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

29 նոյեմբերի 2022 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2022 թվականի N 721-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-076-0001-0019 ԵՎ 08-076-0001-0030 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՐԻԿ ԼԵՌՆԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետական կամ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ, 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ղարիբջանյան բնակավայրի 7-րդ փողոց, 2/4 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0,04478 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված անասնաշենքերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին, շինություններով զբաղեցված հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, շենքերը և շինությունները կառուցված չեն ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և դրանց պահպանումը չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, ինչպես նաև հիմք

ընդունելով Ախուրյանի համայնքապետարանում 2022 թվականի նոյեմբերի 28-ին մուտքագրված քաղաքացի Գարիկ Լեռնիկի Հակոբյանի դիմումը և կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցների թիվ 2022HVZZ66 ծածկագրով հաշվառված լինելու հանգամանքը, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ղարիբջանյան բնակավայրի 7-րդ փողոց, 2/4 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-076-0001-0019 և 08-076-0001-0030 կադաստրային ծածկագրերով 0,04478 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված անասնաշենքերը ճանաչել օրինական, դրանք համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը:

2. Որոշման 1-ին կետով օրինականացված կառույցները և համապատասխան հողամասը՝ տվյալ կառույցն իրականացրած անձին՝ Գարիկ Լեռնիկի Հակոբյանին գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն ներկայացնել:

3. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«29» նոյեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2022 թվականի N 722-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՋՈՒՌ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-094-0013-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Անդրուշ Ազատի Երանոսյանը (ծնված 14/02/1978 թվական) դիմել է Ախուրյան համայնքի ղեկավարին՝ իրենց ընտանիքին «Ջաջուռ համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10/08/1991 թվականի թիվ 9» որոշմամբ հատկացված 0,1460 հեկտար մակերեսով, 08-094-0013-0002 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի տնամերձ հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության շինություններն օրինական համարելու խնդրանքով:

Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ջաջուռ բնակավայրի 8-րդ փողոց, թիվ 15 հասցեավորմամբ, 1989 թվականին կառուցված (մինչև 2001 թվականի մայիսի 15-ը) 132,98 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով ավտոտնակը, մառանը և օժանդակ շինությունները համարվում են ինքնակամ կառույցներ, որոնք կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման կարգի 8, 10, 11 և 22.1 կետերի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Համասեփականության իրավունքով քաղաքացիներ՝ Ազատ Արշակի Երանոսյանին (ծնված 03/05/1943 թվական), Լիդա Ղուկասի Երանոսյանին

(ծնված 08/01/1946թվական), Արտուշ Ազատի Երանոսյանին (ծնված 29/09/1972 թվական) և Անդրուշ Ազատի Երանոսյանին (ծնված 14/02/1978 թվական) պատկանող, Ախուրյան համայնքի, Ջաջուռ գյուղի 8-րդ փողոց, թիվ 15 հասցեավորմամբ, 0,1460 հեկտար մակերեսով, 08-094-0013-0002 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի տնամերձ հողամասի վրա գտնվող, 1989 թվականին կառուցված (մինչև 2001 թվականի մայիսի 15-ը) 132,98 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով ավտոտնակը, մառանը և օժանդակ շինությունները ճանաչել օրինական՝ առանց օրինականացման վճարների գանձման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահին:

3. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«29» նոյեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2022 թվականի N 723-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՑ 6-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 5 ՏՈՒՆ ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 28-րդ, 30-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի 3,1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված ցանկի 4-րդ կետի դասակարգումները և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրի Կենտրոնական փողոց, 6-րդ նրբանցք, 5 տուն հասցեի անշարժ գույքի համասեփականատեր Ռոստոմ Ռազմիկի Հովհաննիսյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրի Կենտրոնական փողոց, 6-րդ նրբացք 5 հասցեի,08-089-0043-0002-001 կադաստրային ծածկագրով, 94,04 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան գործառնական նշանակությունը փոխել մառան գործառնական նշանակություն:
2. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները՝ գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«29» նոյեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 724-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-078-0024-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ 0,019627 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն բնակավայրի տարածքում գտնվող 08-078-0024-0005 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում նոր առաջացած, 0,019627 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Մարմաշեն, 38-րդ փողոց, 5/7 տուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«29» նոյեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 725-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-078-0024-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ 0,02141 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն բնակավայրի տարածքում գտնվող 08-078-0024-0005 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում նոր առաջացած, 0,02141 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Մարմաշեն, 38-րդ փողոց, 5/12 տուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«29» նոյեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 726-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-078-0024-0004 ԵՎ 08-078-0024-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ 0,06837 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն բնակավայրի տարածքում գտնվող 08-078-0024-0004 և 08-078-0024-0005 կադաստրային ծածկագրերով հողամասերի սահմաններում նոր առաջացած, 0,06837 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Մարմաշեն, 38-րդ փողոց, 5 տուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«29» նոյեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«02» դեկտեմբերի 2022 թվականի թիվ 727-Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 728

<<02>> դեկտեմբերի 2022 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ (ԲՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ) ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ ՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով **որոշում եմ՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի զբոսաշրջային ռեսուրսների գույքագրման (բնական, պատմամշակութային, մարդկային) գրանցամատյանի ձևանմուշը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի զբոսաշրջային ռեսուրսների գույքագրման (բնական, պատմամշակութային, մարդկային) գրանցամատյանը վարելու գործառույթները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակցին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

02 դեկտեմբերի 2022 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 02-Ի ԹԻՎ 728 ՈՐՈՇՄԱՆ

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ (ԲՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ)

Սկսված է << ___>> _____202__թ.

Համայնքի ղեկավար_____ _____

(ստորագրություն) (անունի սկզբնատառը և ազգանունը)

Կ.Տ.

Հ/հ	Բնակավայրը	Ռեսուրսի տեսակը /բնական, պատմամշակութային, մարդկային/	Ռեսուրսի անվանումը	Համառոտ նկարագիրը
1	2	3	4	5
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
11				
12				